Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-223-11.03.2013-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (17 նոյեմբերի 1997 թվականի, ՀՕ-163, այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1) հասարակական կարգի պահպանությունը եւ հասարակական անվտանգության ապահովումը.»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) իրականացնել պարեկապահակետային ծառայություն հասարակական վայրերում.».

2) 1.1-ին մասում «պահպանության ապահովմանը մասնակցելիս» բառերը փոխարինել «պահպանությունն ապահովելիս» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: